

« 19 » փետրվար 2018 թ No 428 - Ա

ՄԱԿԵՐԻԿԱՄԻ ԻՆՑԻԴԵՆՏԱԼՈՄԱՅԻ ՎԱՐՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19.3 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման 12-րդ կետի «դ» ենթակետը,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Մակերիկամի ինցիդենտալումայի վարման ուղեցույցը»-ը՝ համաձայն Հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի խորհրդական Արմեն Փարսադանյանին՝ սույն հրամանը հաստատումից հետո սեղմ ժամկետում ապահովել ուղեցույցի մուտքագրումը միասնական էլեկտրոնային առողջապահության համակարգ:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի Հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝

Ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

4. Հայաստանի Հանրապետության բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝ սույն հրամանով հաստատված ուղեցույցը ընդունել ի գիտություն:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ս.Խաչատրյանին:

Լ.ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՄԱԿԵՐԻԿԱՄԻ ԻՆՑԻԴԵՆՏԱԼՈՄԱՅԻ ՎԱՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփ տեսություն

Ուղեցույցը տրամադրում է մակերիկամի ինցիդենտալումայի արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել մակերիկամի ինցիդենտալումայով պացիենտների ախտորոշման և բուժման արդյունքները:

Մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Երևանի պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի էնդոկրինոլոգիայի ամբիոնի կողմից: Փաստաթղթի հիմք է հանդիսացել Ամերիկյան կլինիկական էնդոկրինոլոգների և Ամերիկյան էնդոկրին վիրաբույժների ասոցիացիաների կողմից համատեղ մշակված 2009թ. «Մակերիկամների ինցիդենտալումաների վարման կլինիկական ուղեցույց»-ը (The American Association of Clinical Endocrinologists and American Association of Endocrine Surgeons Medical Guidelines for the Management of Adrenal Incidentalomas): Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների արդյունավետությունը որոշելիս հիմք է ընդունվել Կլինիկական էնդոկրինոլոգների ամերիկյան ասոցիացիայի Ապացույցների գնահատման համակարգը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Հայկական էնդոկրինոլոգների ասոցիացիայի կողմից (արձանագրությունը կցվում է) : Ուղեցույցը նախատեսված է էնդոկրինոլոգների, թերապևտների, վիրաբույժների, էնդոկրին վիրաբույժների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ

խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա ուղեցույցում լուսաբանվել են մակերիկամի ինցիդենտալումայի համաճարակաբանությունը, կորտիզոլ արտադրող մակերիկամի ադենոմայի, ենթակլինիկական Կուշինգի համախտանիշի, ֆեոքրոմադոմայի, ալդոստերոնոմայի, ադրենոկորտիկալ կարցինոմայի կլինիկական պատկերի, ախտորոշման, պահպանողական և վիրահատական բուժումների և ելքերի հիմնահարցերը: Ընդհանուր առմամբ ձևակերպվել է 26 խորհուրդ:

Եզրակացություն

Միջազգային փորձագետների մեծաքանակ խումբը եկել է համաձայնության մակերիկամի ինցիդենտալումայի վարման բազմաթիվ կարևոր սկզբունքների վերաբերյալ: Չնայած այն փաստին, որ շատ խորհուրդներ ունեն թույլ ապացուցողական մակարդակ, այնուամենայնիվ, այս մեթոդաբանությամբ մշակված տեղեկատվությունը՝ բարձր մահացության ռիսկով պացիենտների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

Հիմնական բառեր

Մակերիկամի ինցիդենտալումա, ուղեցույցներ, ենթակլինիկական Կուշինգի համախտանիշ, ալդոստերոնոմա, ֆեոքրոմադոմա, ադրենոկորտիկալ քաղցկեղ, ամերիկյան էնդոկրին վիրաբույժների ասոցիացիա, լապարասկոպիա:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում: Խորհուրդների մեծամասնությունը կիրառելի է ինչպես ինտենսիվ թերապիայի բաժանմունքում (ԻԹԲ) գտնվող, այնպես էլ ոչ ԻԹԲ-ում հոսպիտալացված հիվանդների համար:

Բովանդակություն

Նախաբան

Մակերիկամի ինցիդենտալումա

Կորտիզոլ արտադրող մակերիկամի ադենոմա

Ենթակլինիկական Կուշինգի համախտանիշ

Փեոքրոմադիտոմա

Ալդոստերոնոմա

Ադրենոկորտիկալ կարցինոմա

Մետաստատիկ ախտահարում

Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Կլինիկական էնդոկրինոլոգների ամերիկյան ասոցիացիայի Ապացույցների

զննահատման համակարգ

Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

Հապավումներ

ԱԿՏՀ - ադրենոկորտիկոտրոպ հորմոն

ԱՓՖ - անգիոտենզին փոխակերպող ֆերմենտ

ՀՇ - համակարգչային շերտագրություն

ԿՀ - Կուշինգի համախտանիշ

ՄՌՇ - մագնիսառեզոնանսային շերտագրություն

ԶԾ - զարկերակային ճնշում

ՊԲՎՓ - պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում

ԵԿՀ - ենթակլինիկական Կուշինգի համախտանիշ

ՄԱԿ - մեզում ազատ կորտիզոլ

ԴՀԷԱ-Ս - դեհիդրոէպիանդրոստերոնսուլֆատ

ARR (aldosterone-to-renin ratio) - ալդոստերոնի և ռենինի հարաբերակցություն

ACC (adrenocortical carcinoma) - ադրենոկորտիկալ կարցինոմա

AVS (adrenal venous sampling) - մակերիկամի երակային նմուշառում

HU (Hounsfields Units) - Հաունսֆիլդի միավոր

FDG PET (fludeoxyglucose positron emission tomography) - ֆլուդեօքսիգլուկոզայով
պոզիտրոն էմիսիոն տոմոգրաֆիա

MEN (multiple endocrine neoplasm) - բազմակի ներզատաբանական
նորագոյացություն

VHL gene (von Hippel-Lindau disease) - վոն Հիպպել-Լինդաուի հիվանդության գեն

BEL (best evidence level) - լավագույն ապացույցների մակարդակ

EL (evidence level) - ապացույցների մակարդակ

Նախաբան

Մակերիկամի ինցիդենտալուման ռադիոլոգիական պատահական հետազոտության ժամանակ հայտնաբերված մակերիկամի ուռուցք է: Վերջինիս հիվանդացությունն աճել է, աուտոպսիայով հայտնաբերված դեպքերը կազմում են 8.7%(1 [EL 3], 2[EL3]): Ներկայումս աճ է գրանցվել ոչ միայն ինցիդենտալումաների քանակի այլ նաև վերջիններիս ֆունկցիոնալ լինելու հավանականության մեջ, ինչը բացատրվում է ենթակլինիկական նշանների պլանային կարգով մանրակրկիտ ուսումնասիրությամբ (3 [EL 2]): Ինցիդենտալումա չի համարվում, եթե պացիենտին կատարում են ռադիոլոգիական հետազոտություն քաղցկեղի և դրա տարածվածության կապակցությամբ: Մակերիկամի ինցիդենտալումա հայտնաբերելիս անհրաժեշտ է որոշել.

- ❖ արդյոք ուռուցքը հորմոնալ ակտիվ է.
- ❖ արդյոք ուռուցքի ռադիոլոգիական նշանները բնորոշ են չարորակ գոյացությանը.
- ❖ արդյոք պացիենտը նախկինում ունեցել է չարորակ գոյացություն:

Ինցիդենտալումայի դեպքում պետք է ժխտել հիպերկորտիզոլիզմը, ալդոստերոնիզմը (եթե առկա է գերճնշում) և ֆեոքրոմոցիտոմայի առկայությունը: Գրականության ամփոփումը ցույց է տալիս, որ ինցիդենտալումաներով 80% պացիենտների շրջանում առկա է ոչ ֆունկցիոնալ ադենոմա, 5%-ն ունեն ենթակլինիկական Կուշինգի համախտանիշ (ԵԿՀ), 5%-ը՝ ֆեոքրոմոցիտոմա, 1%-ը՝ ալդոստերոնոմա, < 5%-ը՝ ադրենոկորտիկալ կարցինոմա (ACC), 2.5%-ը՝ մետաստատիկ ախտահարում, իսկ

մնացած դեպքերում հայտնաբերվել են գանագլիոնկրոմաներ, միելոլիպոմաներ կամ բարորակ բշտեր (4 [EL 4], 5 [EL 4]):

Պացիենտները, որոնց մոտ հայտնաբերվել է մակերիկամի ինցիդենտալոմա, պետք է հետազոտվեն էնդոկրինոլոգի կամ էնդոկրին վիրաբույժի կողմից: Ֆեոքրոմադիտոմայի դեպքում անհրաժեշտ է նախավիրահատական լուրջ պատրաստում՝ խուսափելու համար ներվիրահատական և հետվիրահատական բարդություններից: Առաջնային ալդոստերոնիզմով պացիենտների շրջանում պետք է ժխտել ադրենոկորտիկալ հիպերպլազիայի և մակերիկամի հորմոն ոչ ակտիվ ադենոմայի առկայությունը: Կուշինգի համախտանիշի (ԿՀ) վիրահատական բուժման արդյունքում պացիենտները կարիք ունեն ստերոիդների փոխարինող թերապիայի: Ենթակլինիկական Կուշինգի համախտանիշի (ԵԿՀ) դեպքում վիրահատական բուժման կարիք չկա: Հորմոնային ոչ ակտիվ մակերիկամի ուռուցքները, որոնց չափը **գերազանցում է 4սմ-ը**, վիրաբուժական միջամտության ցուցում ունեն: Անախտանշանային, **մինչև 4 սմ** ուռուցքները, փոքր միելոլիպոմաները և բարորակ բշտերը կարիք չունեն վիրաբուժական միջամտության:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Երևանի պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի էնդոկրինոլոգիայի ամբիոնի կողմից: Փաստաթղթի հիմք է հանդիսացել Ամերիկյան կլինիկական էնդոկրինոլոգների և Ամերիկյան էնդոկրին վիրաբույժների ասոցիացիաների կողմից համատեղ մշակած 2009թ. «Մակերիկամների ինցիդենտալոմաների վարման կլինիկական ուղեցույց»-ը (The American Association of Clinical Endocrinologists and American Association of Endocrine Surgeons Medical Guidelines for the Management of Adrenal Incidentalomas) [6]: Գրականության աղբյուրներն ընտրվել են հիմնական բառերի օգնությամբ իրականացված համակարգային որոնման հիման վրա: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ուղեցույցների ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն և

ցանկացած խորհրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Սկզբնաղբյուրում կիրառված ապացույցների գնահատման համակարգը (ACE Evidence Rating Based on Reference Methodology) առանձին որակավորում է՝ գրականության հղումներին շնորհելով վերջիններիս ապացույցների մակարդակներ (1,2,3,4,) և խորհուրդների աստիճաններ՝ A,B,C,D [7]: Մանրամասները տես՝ Աղյուսակ 1 և Աղյուսակ 2: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքներն իրականացվել են ըստ ADAPTE մեթոդաբանության՝ միջմասնագիտական աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով: Ուղեցույցի դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի բոլոր անդամների կոնսենսուս: Սույն Ուղեցույցը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Մակերիկամի ինցիդենտալումա

Հիվանդության պարմություն և ֆիզիկական քննություն

Մակերիկամի ինցիդենտալումայի դեպքում՝ հայտնաբերված համակարգչային շերտագրության՝ ՀՇ-ի կամ մագնիսառեզոնանսային շերտագրության՝ ՄՌՇ –ի միջոցով, անհրաժեշտ է կլինիկական հետազոտություն: Հիպերկոտիզիզմի կամ ԿՀ-ի դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել քաշի ավելացմանը, ճարպակալմանը, արտահայտված հիպերտենզիային, դիաբետի առկայությանը, վիրիլիզացիային, պրոքսիմալ մկանային թուլությանը, հոգնածությանը: Ֆեոքրոմացիտոմայի դեպքում առաջանում է սուր գլխացավ, քաշի անկում, անհանգստություն, քրտնարտադրություն, առիթմիա, հաճախասրտություն:

Ալդոստերոնիզմի դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հիպերտենզիայի առկայությանը, հեղուկների ներծծմանը, հիպոկալիեմիայի առկայությանը: Անհրաժեշտ է բացառել նաև մակերիկամի մետաստատիկ ախտահարումը՝ քաղցկեղի առկայություն անամնեզում, ծխելը, քաշի անկումը: Ֆիզիկական հետազոտությունը պետք է ընդգրկի ԶԾ-ի չափում, երակազարկի ստուգում,

ճարպակալման, էկխիմոզների, սպիաթծերի, մկանային ատրոֆիայի, հիրսուտիզմի, վիրիլիզացիայի նշաններին: Կարևոր է պացիենտի նախկին նկարների դիտումը:

Լաբորատոր գնահատում

Մակերիկամի գոյացություն հայտնաբերելիս, անհրաժեշտ է լաբորատոր գնահատում, բացի տեսանելի միելոլիպոմայից: Մակերիկամի միելոլիպոման ունի ցածր խտություն՝ $< 10 - 20 \text{ HU}$, պարունակում է նաև ճարպ (8 [EL2]: Յուրաքանչյուր հորմոնաակտիվ ադենոմայի բուժումը վիրահատական է: Կատարվում է սքրինինգ ենթակլինիկական Կուշինգի համախտանիշի կապակցությամբ 1 մգ դեքսամետազոնային սուպրեսիվ գիշերային թեստ: ԵԿՀ ենթադրելի է, եթե պլազմայի կորտիզոլն ավելի է 5 mg/dL 1mg դեքսամետազոնային փորձից հետո: ԱԿՏՀ և դեհիդրոէպիանդրոստերոնի մակարդակը նույնպես վկայում են ԵԿՀ-ի մասին: Հիպոթալամո-հիպոֆիզար-մակերիկամային համակարգի ֆունկցիայի որոշման թեստը, օրինակ, երկօրյա ցածր դեղաչափով դեքսամետազոնային սուպրեսիվ թեստը, կարող է անհրաժեշտ լինել ենթակլինիկական Կուշինգի համախտանիշն ախտորոշելու համար (9 [EL 2]):

Հիպերտենզիայի դեպքում, եթե պլազմայի ալդոստերոնի հարաբերությունը ռենինի մակարդակին > 20 , որոնք չեն ընդունում սպիրոնոլակտոն և այլ միներալկորտիկոիդային ռեցեպտորների բլոկատորներ, ապա պետք է ժխտել առաջնային հիպերալդոստերոնիզմը (4 [EL4], 10 [EL4]): Ֆեոքրոմագիտոմայի մասին է վկայում պլազմայում ազատ մետանեֆրինի և նորմետանեֆրինի և 24-ժամյա մեզում մետանեֆրինի և ֆրակցիոնացված կատեխոլամինների բարձր մակարդակը (11[EL 4], 12[EL3]):

Սեռական հորմոններն անհրաժեշտ է ստուգել, եթե կան կլինիկական նշաններ՝ ստիգմաներ:

Ռադիոլոգիական հետազոտություն

Վիզիուալիզացիայի հիմնական նշանակությունը մակերիկամի ադենոմայի, կարցինոմայի, ֆեոքրոմագիտոմայի և մետաստատիկ ախտահարման

տարբերակումն է: Կարևոր է նշել, որ ռադիոլոգիական հետազոտության միջոցով հնարավոր չէ հստակ տարբերակել հորմոն արտադրող և ոչհորմոն արտադրող մակերիկամի ադենոմաները: Ադենոմայի ախտորոշման հիմքում ընկած է մակերիկամի գոյացության ինտրացելուլար լիպիդների առկայությունը, որի խտությունը հնարավոր է որոշել ոչ կոնտրաստավորմամբ ՀՇ-ի կամ ՄՌԾ-ի միջոցով: Այլընտրանքային ադենոման հնարավոր է ախտորոշել ՀՇ կոնտրաստավորման միջոցով: Գոյացությունները, որոնք ունեն 10HU ցածր խտություն առանց կոնտրաստավորման ՀՇ-ով, վկայում են ադենոմաների մասին (8[EL 2], 13[EL 3], 14[EL 3]): Տարբերակիչ ախտորոշում կատարելու համար հնարավոր է կոնտրաստավորմամբ ՀՇ-ի անհրաժեշտություն, անմիջապես կոնտրաստավորման պահին և այնուհետև 10, 15 րոպե անց: Բարորակ գոյացությունները 80-90 HU խտության են և 50%-իվ ավելի պահում են կոնտրաստը, ի տարբերություն մետաստատիկ ախտահարման, կարցինոմայի, ֆեոքրոմացիտոմայի (8[EL 2]): Ֆեոքրոմացիտոման հիմնականում 100HU խտությունից բարձր է: Առանց կոնտրաստավորման ՀՇ-ով, որոշ բարորակ գոյացություններ ունեն 10HU-ից բարձր խտություն, օրինակ 20-40HU. Դրանք հիմնականում քիչ քանակությամբ լիպիդ պարունակող ադենոմաներն են: Այդ դեպքերում հաշվի է առնվում կոնտրաստի դատարկումը, որը 50%-ից ավել է ադենոմաների դեպքում:

Հորմոնալ ոչ ակտիվ ինցիդենտալումաների դինամիկ հսկողությունը

Հիվանդները, ովքեր ունեն 4սմ-ից փոքր ինցիդենտալումա և ռադիոլոգիական հետազոտությամբ բարորակ ադենոմայի ախտորոշման չափանիշներ, պետք է կրկնակի ռադիոլոգիական հետազոտություն անցնեն *3-6ամիս անց*, այնուհետև տարին մեկ անգամ *1-2 տարվա ընթացքում* (6[EL 4], 15 [EL 3] 16[EL 3]): Հորմոնային հետազոտությունը պետք է կատարվի ինցիդենտալուման ախտորոշելու ժամանակ, այնուհետև, ամեն տարի՝ 5 տարվա ընթացքում (3[EL 2]): Գոյացության մեծացման հավանականությունը 1, 2, 5 տարում համապատասխանաբար 6%, 14%, 29% է, իսկ հորմոն-ոչ ակտիվ ուռուցքի հորմոն-ակտիվ ուռուցքի վերածման ռիսկը համապատասխանաբար՝ 17%, 29%, 47% է (3[EL 2]): Հիմնական հորմոն-ակտիվ գոյացությունը, որը նախկինում հորմոն- ոչ ակտիվ էր, ենթակլինիկական Կուշինգի

համախտանիշն է: Բարորակ ադենոմայի կամ հիպերպլազիայի վերածում ադրենոկորտիկալ քաղցկեղի՝ հազվադեպ է լինում (15 [EL3], 17[EL2], 18-20[EL3]): Եթե ուռուցքը դինամիկ հսկողության ընթացում մեծանում է *1սմ և ավելի*, կամ այն դառնում է հորմոն-ակտիվ, ապա ցուցված է վիրահատական բուժում: Այժմ հայտնի չէ հորմոն-ոչ ակտիվ գոյացության դինամիկ հսկողությունը 5 տարի անց:

Կորտիզոլ արտադրող մակերիկամի ադենոմա

Ադրենոկորտիկալ ադենոման կարող է առաջացնել ինչպես Կուշինգի համախտանիշ, այնպես էլ ԵԿՀ: ԵԿՀ-ն առավել հաճախ հանդիպողն է: Այն կազմում է 5,3%՝ 2000 դեպքից (4 [EL4]): ԿՀ-ի բնորոշ նշանները և ախտանշանները միշտ չէ, որ առկա են: Լաբորատոր հետազոտությունն անհրաժեշտ է տարբերակման համար: ԿՀ-ի դեպքում առկա են հիպերկորտիցիզմին բնորոշ տիպիկ ստիգմաներ:

Հիվանդության պատմություն և ֆիզիկական քննություն

Ուշադրություն է դարձվում հոգնածության, դեպրեսիայի, քնի խանգարումների, քաշի ավելացման, մենստրուալ ցիկլի խանգարումների, հիպերտենզիայի, գլյուկոզայի տոլերանտության խանգարման, օստեոպորոզի առկայությանը: Ֆիզիկական քննության ժամանակ չափվում է ԶՃ-ն, երակազարկը, ուշադրություն է դարձվում կենտրոնական ճարպակալման առկայությանը, վերանրակային և հետպարանոցային շրջանում ճարպի առկայությանը, դեմքի գերարյունությանը, բոսորագույն և խոշոր սպիաբծերին, որոնք մեծ են 1սմ-ից, ակնեին, էկսիմոզին, հիրսուտիզմին, պրոքսիմալ մկանային թուլությանը: Վերոնշյալ ախտանշանները և նշանները վկայում են Կուշինգի համախտանիշի մասին: Քիչ արտահայտված Կուշինգի համախտանիշի դեպքում կարող են առկա լինել մի քանի նշան կամ ախտանիշ: Պացիենտների մոտ, ովքեր չունեն Կուշինգի համախտանիշ, ևս հնարավոր է մեկ կամ մի քանի վերոնշյալ նշաններ: Կուշինգի համախտանիշը հնարավոր չէ ախտորոշել միայն կլինիկական նշաններով, անհրաժեշտ է հորմոնային հետազոտություն:

ԿՀ լաբորատոր գնահատում

Կուշինգի համախտանիշի լաբորատոր գնահատումը երկքայլ գործընթաց է, որն սկզբում ընդգրկում է մեկ կամ երկու սքրինինգային թեստ: Եթե սքրինինգի արդյունքները դրական են, հաստատող հետազոտությունները կատարվում են: Դրանք հիմնված են 3 պաթոֆիզիոլոգիական խանգարումների վրա.

1. Կորտիզոլի արտադրման ռիթմի խանգարում՝ անկանոն բարձր՝ գիշերը (ուշ գիշերվա թքային կորտիզոլի թեստ):
2. Կորտիզոլի արտադրման դադարեցման խանգարում, չնայած ԱԿՏՀ-ի խթանման բացակայությանը (դեքսամետազոնային սուպրեսիվ թեստ):
3. Կորտիզոլի գերարտադրություն (24-ժամյա մեզում ազատ կորտիզոլի թեստ):

Սքրինինգային թեստեր

Ուշ գիշերվա թքային կորտիզոլի թեստ

Ուշ գիշերվա թքային կորտիզոլի թեստն ամենաառաջնային սքրինինգային թեստն է Կուշինգի համախտանիշի համար: Նորմալ քնի ռեժիմով պացիենտները հավաքում են թուքը քնելուց առաջ, այնուհետև հանձնում լաբորատորիա: Գիշերվա կորտիզոլի բարձր մակարդակն ամենաառաջին և զգայուն մարկերն է Կուշինգի համախտանիշի ախտորոշման համար (24[EL 4], 25[EL4]), զգայունությունը և առանձնահատկությունը համապատասխանաբար 90% և 95% են (26[EL3]):

Գիշերային 1մգ դեքսամետազոնային սուպրեսիվ թեստ

Գիշերային 1մգ դեքսամետազոնային սուպրեսիվ թեստը կատարվում է ժամը 23.00-ին 1մգ դեքսամետազոնի ընդունմամբ և հաջորդ օրը ժամը 8.00-9.00 ընկած ժամանակահատվածում արյան պլազմայում կորտիզոլի որոշմամբ: Եթե արյան պլազմայում կորտիզոլի մակարդակը $<1,8\mu\text{g/dL}$ է ապա Կուշինգի համախտանիշը բացակայում է(5[EL 4]: Թեստի դրական լինելու դեպքում անհրաժեշտ է կատարել 24- ժամյա մեզում ազատ կորտիզոլի թեստ, ուշ գիշերային թքային կորտիզոլի թեստ, 2-օրյա ցածր դեղաչափով դեքսամետազոնային թեստ:

24 -ժամյա մեզում ազատ կորտիզոլի թեստ (24-ժամյա ՄԱԿ)

24-ժամյա ՄԱԿ-ը համարվում է կորտիզոլի մակարդակի որոշման լավագույն թեստ, համեմատած արյան պլազմայում կորտիզոլի մակարդակի, քանի որ 24-ժամյա ՄԱԿ-ի վրա չեն ազդում այն գործոնները, որոնք ազդում են կորտիզոլ կապող գլոբուլինի վրա: Եթե 24-ժամյա ՄԱԿ-ի մակարդակը 4 անգամ գերազանցում է նորմային, դա վկայում է Կուշինգի համախտանիշի մասին (27 [EL 4]): Մինչև 3 անգամ գերազանցող մակարդակը, կարող է վկայել կեղծկուշինգի համախտանիշի մասին՝ կապված քրոնիկական տագնապի, դեպրեսիայի, ալկոհոլիզմի, ճարպակալման, որոշ դեղորայքների օգտագործման հետ (24 [EL 4], 28 [EL 3]: Որոշ դեպքերում անհրաժեշտ է լրացուցիչ հաստատող թեստեր:

Այժմ չկա որևէ սքրինինգային թեստ, որն ունի 100% զգայունություն, այն չի կարող լիովին բացառել հիպերկորտիզոլիզմը: Սքրինինգային թեստերն ունեն տարբեր նպատակին ուղղություններ և պաթոֆիզիոլոգիական նշանակություն, այդ պատճառով դրանք լրացնում են միմյանց: Ինցիդենտալումայի դեպքում առայժմ լիարժեք ախտորոշիչ չափանիշ գոյություն չունի. ինքնուրույն կորտիզոլ արտադրող ուռուցքն ինցիդենտալումայից տարբերակելու պարզագույն մեթոդը՝ գիշերային 1 մգ դեքսամետազոնային սուպրեսիվ թեստն է: Եթե կլինիկական նշանները վկայում են հիպերկորտիզոլիզմի մասին՝ հիպերտենզիա, ճարպակալում, շաքարային դիաբետ, օստեոպորոզ, կատարվում են բոլոր սքրինինգային թեստերը:

ԱԿՏՀ-ի մակարդակը ցածր լինելը վկայում է մակերիկամային ծագման ԿՀ-ի մասին: Կորտիկոտրոպ ռիլիզինգ հորմոնով խթանելու թեստն իրականացվում է, եթե ԱԿՏՀ-ն ցածր է կամ համապատասխան չի բարձրանում, տարբերակելու համար ԱԿՏՀ-կախյալ ԿՀ-ն՝ ԱԿՏՀ-ոչ կախյալ ԿՀ-ից (29, [EL 4]):

Հարվիրահատական վարումը

Նախավիրահատական շրջանում բարձր կորտիզոլի դեպքում, եթե առկա է հիպերտենզիա և շաքարային դիաբետ, անհրաժեշտ է համապատասխան շտկում: Մեծ է ռիսկը թրոմբոէմբոլիկ բարդությունների, այդ պատճառով նախավիրահատական շրջանում անհրաժեշտ է կանխարգելել դրանց առաջացումը: Շատ բարձր կորտիզոլի դեպքում պետք է հաշվի առնել նաև իմունասուպրեսիվ

վիճակը: Նման դեպքերում, հարվիրահատական շրջանում, որպես կանխարգելում տրվում է հակաբիոտիկաթերապիա: Պետք է կատարվի նաև պեպտիկ խոցերի կանխարգելում:

Կուշինգի համախտանիշի դեպքում հիպոթալամո-հիպոֆիզար-մակերիկամային համակարգն ընկճված է: Ադրենոկորտիկալ ադենոմայի դեպքում բարձր կորտիզոլի արդյունքում ԱԿՏՀ-ի մակարդակը նվազած է: Դրա արդյունքում ատրոֆիայի է ենթարկված մյուս մակերիկամը: Կորտիզոլ արտադրող ադենոմայի հեռացնելուց հետո, նշանակվում է գլյուկոկորտիկոիդային փոխարինող թերապիա (30 [EL 3]): Կարող է նշանակվել բարձր սթրեսային դեղաչափեր 12-15 mg/m² հիդրոկորտիզոն (31 [EL 4]): ԿՀ-ի վիրահատական բուժումից հետո անհրաժեշտ է էկզոգեն գլյուկոկորտիկոիդային փոխարինող թերապիա, մինչև հիպոթալամո-հիպոֆիզար-մակերիկամային համակարգի վերականգնվելը: Դա կարող է տևել 6-18 ամիս միակողմանի ադրենալեկտոմիայից հետո: ԸստԴոհերթի և այլոց (32 [EL 2]), միջինում 15 ամիս է տևում վերականգնումը, իսկ հիդրոկորտիզոնը դադարեցնելու ժամանակը 19 ամիս է (միջինում 12-24): Բոլոր պացիենտները նախավիրահատական շրջանում պետք է տեղեկացված լինեն երկարատև կորտիկոստերոիդային փոխարինող թերապիայի մասին:

Ենթակլինիկական Կուշինգի համախտանիշ

Մակերիկամի ինցիդենտալումայով պացիենտների ավելի քան 5%-ը կարող են ունենալ ԵԿՀ (4, [EL 4]): Այն բնորոշվում է մակերիկամի գոյացության կողմից կորտիզոլի ոչ արտահայտված ինքնուրույն հիպերսեկրեցիայով: Հիմնականում մյուս մակերիկամի ֆունկցիան ճնշված է: ԵԿՀ-ին բնորոշ չեն արտահայտված կլինիկական դրսևորումները, ինչպիսիք են բնորոշ ճարպակալումը, մաշկի ախտահարումը, պրոքսիմալ մկանային թուլությունը: Այս ախտորոշումը երբեմն դրվում է հետվիրահատական շրջանում մակերիկամային անբավարարության զարգացման դեպքում: Եթե ենթակլինիկական Կուշինգի համախտանիշը երկարատև է, կարող են զարգանալ ԿՀ-ին բնորոշ արտահայտված կլինիկական նշաններ: Շատ հետազոտություններ ցույց են տալիս հիպերտենզիայի, ճարպակալման, ինսուլինի ռեզիստենտության, դիսլիպիդեմիայի և օստեոպորոզի

առավել շատ տարածվածությունը ենթակլինիկական ԿՀ-ի դեպքում (33-36 [EL 3]): Սակայն քիչ արտահայտված կորտիզոլի ինքնուրույն հիպերսեկրեցիայի և մետաբոլիկ խանգարումների միջև չկա ապացուցողական կապ: Ըստ Ռայնկեի (37, [EL 4]) մակերիկամի գոյացությունները կարող են մետաբոլիկ համախտանիշի արտահայտման հետևանք լինել, դրանք կարող են առաջանալ ինսուլինի տրոֆիկ էֆեկտի արդյունքում: Հայտնի է, որ ԵԿՀ-ի զարգացումը և վերածումը Կուշինգի համախտանիշի՝ հազվադեպ է հանդիպում (1-7 տարվա հետևելու արդյունքներ) (3 [EL 2], 17 [EL 2]): Սակայն, հիվանդացության և մահացության երկարատև տվյալներ չկան:

Ախտորոշում

ԵԿՀ-ն ախտորոշվում է լաբորատոր հետազոտմամբ: Տվյալ դեպքում 1 մգ դեքսամետազոնային սուպրեսիվ թեստը ավելի զգայուն է, քան մեզում ազատ կորտիզոլի որոշումը (29 [EL 4]): Արդյունքում, որպես առաջնային սքրինինգ թեստ օգտագործվում է դեքսամետազոնային սուպրեսիվ թեստը, սակայն դրա արդյունքների մակարդակը վիճելի է: 5 $\mu\text{g/dL}$ -ի դեպքում առանձնահատկությունը 100% է, իսկ զգայունությունը 58%, ցածր արժեքի դեպքում՝ 1,8 $\mu\text{g/dL}$, առանձնահատկությունը կազմում է 72%-82%, իսկ զգայունությունը 75%-100% (38 [EL 3], 39 [EL3]): Առաջարկվում է օգտագործել բարձր արժեքը (5 $\mu\text{g/dL}$), որի առանձնահատկությունն առավել բարձր է: Ոչ ակտիվ գոյացությունների դեպքում յուրաքանչյուր տարի կատարվում է լաբորատոր հետազոտություն՝ 5 տարի շարունակ, սակայն տվյալ դեպքում կարող է հետագա հետևումը տևել ավելի երկար: ԱԿՏՀ-ի և ԴՀԷԱ-ի ցածր մակարդակը ևս վկայում են ենթակլինիկական Կուշինգի համախտանիշի մասին: Ըստ որոշ գիտնականների, ախտորոշումը հաստատելու համար անհրաժեշտ է նաև 2-օրյա ցածր դեղաչափով դեքսամետազոնային սուպրեսիվ թեստ (9 [EL2]):

Վարումը

ԵԿՀ-ի վարման՝ վիրաբուժական կամ կոնսերվատիվ բուժում, օպտիմալ մեթոդ դեռ մշակված չէ: Հաշվի է առնվում ռիսկի գործոնները, օրինակ, կարդիովասկուլյար

ռիսկի գործոնները (հիպերտենզիա), մետաբոլիկ խանգարումները մեծամասամբ պահպանվում են ադրենալէկտոմիայից հետո: Վիրահատական բուժում ցուցված է երիտասարդ պացիենտների մոտ (<40 տարեկանից), եթե դիաբետի, հիպերտենզիայի, օստեոպորոզի ընթացքը բարդանում է (40 [EL 4]), իսկ մեծահասակների մոտ՝ կլինիկական արտահայտված դրսևորումների դեպքում: Բոլոր պացիենտներին հետվիրահատական շրջանում, առավոտյան պլազմայում կորտիզոլի մակարդակը որոշելուց հետո նշանակվում է կորտիկոստերոիդային փոխարինող թերապիա, մինչև հիպոթալամ-հիպոֆիզար-մակերիկամային համակարգի վերականգնվելը(41 [EL 3]): Ներվիրահատական գլյուկոկորտիկոիդային փոխարինող թերապիայի կարիք չկա: (42 [EL 4], 43 [EL 2]):

Ֆեոքրոմագիտոմա

Ֆեոքրոմագիտոմա կարելի է կասկածել, եթե կա ծանր հիպերտենզիա, տախիկարդիա, սրտի ռիթմի խանգարում, տազնապային վիճակներ, քաշի անկում, քրտնարտադրություն: 15% դեպքերում հիպերտենզիան կարող է բացակայել: Ֆեոքրոմագիտոմայի ախտորոշման համար որոշվում է 24-ժամյա մեզում ֆրակցիոնացված կատեխոլամինները, վանիլինաթթուն, ընդհանուր մեզի մետանեֆրինը: Վերջերս, բարձր զգայունության համար, որոշվում է պլազմայում ազատ մետանեֆրինի և նոր մետանեֆրինի մակարդակը: Մեզի մեջ ցուցանիշներն ունեն բարձր կեղծ-բացասական արդյունքներ, իսկ արյան մեջ ցուցանիշներն ունեն բարձր կեղծ-դրական արդյունքներ: Եռափուլ հակադեպրեսանտների, ամֆետամինի, ռեզերպինի և ֆենօքսիբենզամինի օգտագործումը պետք է դադարեցնել, քանի որ մեծանում է կեղծ-դրական արդյունքների հավանականությունը: Ֆեոքրոմագիտոմայի վարման ամենաուժեղ խորհուրդը EL 2 է (44 [EL4]):

Հիվանդության պատմություն և ֆիզիկական քննություն

Հիվանդության պատմության հիմքում ընկած է հիպերտենզիայի առկայությունը, գլխացավերը, քաշի անկումը, տազնապի զգացումը, քրտնարտադրությունը, սրտի ռիթմի խանգարումը, ինչպես նաև ընտանեկան

համախտանիշները, որոնք ընթանում են ֆեոքրոմադիտոմայով, ինչպես օրինակ, վոն Հիպպել-Լինդաուի հիվանդությունը, MEN 2, ընտանեկան պարագանգլիոմա, նեյրոֆիբրոմատոզ: Ֆիզիկալ քննությունը ներառում է ճնշման և երակազարկի չափում, քաշի որոշում, գերքրտնարտադրության հայտնաբերում, սրտի ֆունկցիայի գնահատում՝ բացառելու սրտային անբավարարությունը:

Լաբորատոր գնահատում

Մեծամասամբ ֆեոքրոմադիտոմաներն արտադրում են կատեխոլամիններ՝ նորէպինեֆրին կամ էպինեֆրին, հազվադեպ՝ դոպամին(45 [EL 4]): Ֆեոքրոմադիտոմայի ախտորոշման համար որոշվում է 24-ժամյա մեզում ընդհանուր կամ ֆրակցիոնավորված մետանեֆրինը: Ընդհանուր մետանեֆրինի քանակը 24-ժամյա մեզում 1,800 μ g-ից ավելի լինելու դեպքը վկայում է ֆեոքրոմադիտոմայի մասին: Պլազմայում մետանեֆրինի քանակը 3-4 անգամ նորմայից բարձր լինելու դեպքը նույնպես վկայում է ֆեոքրոմադիտոմայի մասին, համապատասխանաբար, զգայունությունը կազմում է 77%-97%, իսկ առանձնահատկությունը՝ 69%-98%: Պլազմայում ազատ մետանեֆրինի և նորմետանեֆրինի որոշումն ունի բարձր զգայունություն՝ 97%-100%, իսկ առանձնահատկությունը՝ 85%-89%: Վերջինս համարվում է ֆեոքրոմադիտոմայի համար լավագույն սկզբնական սքրինինգային թեստ(11 [EL 4], 12 [EL3]):

Գենետիկական հետազոտություն

Եթե ֆեոքրոմադիտոման հայտնաբերվել է երիտասարդ տարիքում, ունի մուլտիֆոկալ տեղակայում, արտամակերիկամային տեղակայում, ապա անհրաժեշտ է RET, VHL գենետիկ հետազոտություն՝ սուկցինատդեհիդրոգենազի ենթատիպերի գենի մուտացիան հայտնաբերելու համար: (46 [EL 4], 47 [EL 2], 48 [EL 2]):

Ռադիոլոգիական հետազոտություն

Ֆեոքրոմադիտոմայի ախտորոշման համար կատարվող ՀՇ կոնտրաստավորումով հետազոտության զգայունությունը կազմում է 85%-95%, իսկ

առանձնահատկությունը 70%-100%, ՄՌՇ հետազոտության զգայունությունը կազմում է 95%, իսկ առանձնահատկությունը՝ 100% (49 [EL 3], 50 [EL 3], 51 [EL 4]): MRT հետազոտության ժամանակ T2 ռեժիմում բարձր ինտենսիվությունը բնորոշ է ֆեոքրոմացիտոմային (52 [EL 4]):

Չարորակ գոյացություն

Չարորակ ֆեոքրոմացիտոման ախտորոշելը բարդ է, այն բարորակ և չարորակ ֆեոքրոմացիտոմաները տարբերակելու ռադիոլոգիական և հյուսվածաբանական չափորոշիչներ չունի: Չարորակ ֆեոքրոմացիտոմա կարելի է ախտորոշել, եթե հարակից օրգանների ինվազիա կա կամ, եթե զարգացել է մետաստատիկ հիվանդություն: Ֆեոքրոմացիտոմայի չարորակ լինելը երեխաների, տղամարդկանց մոտ և ընտանեկան համախտանիշների դեպքում քիչ հավանական է (53[EL 4]): Բացառություն է չարորակ ֆեոքրոմացիտոմայով ընտանեկան դեպքերը և սուկցինատդեհիդրոգենազա B մուտացիան (54 [EL 3]):

Նախավիրահատական վարումը

Նախավիրահատական շրջանի նախապատրաստումը ենթադրում է ալֆա-բլոկատորների օգտագործում 1-3 շաբաթ տևողությամբ, խուսափելու համար վիրահատության ժամանակ ճնշման տատանումներից: Ամենահաճախ օգտագործվող ֆենօքսիբենզամինն է, որը երկար ազդեցության ալֆա-բլոկատոր է: Բուժումը ԵԿՀ- ի դեպքում՝ 10մգ օրը 2 անգամ, հետագայում դեղաչափը տիտրացվում է մինչև 300-400 մգ, մինչ նորմալ վիճակի հասնելը, կամ եթե զարգացել են կողմնակի երևույթներ(օրթոստատիկ հիպոտենզիա, տախիկարդիա, սրտխառնոց, որովայնի ցավ) (53 [EL 4], 55 [EL 4]): Այլ ալֆա-բլոկատորներ, օրինակ, դոքսազոսինը ևս կարող է օգտագործվել ֆեոքրոմացիտոմայի նախավիրահատական շրջանում(55 [EL 4]): Ալֆա-մեթիլթիրոզինը, որը թիրոզինհիդրօքսիլազի ինհիբիտոր է, կատեխոլամինների սինթեզը դադարեցնում է, օգտագործվում է ֆենօքսիբենզամինի հետ միասին նախավիրահատական շրջանում: Փոքր, ոչ ռանդոմիզացված հետազոտությունները ցույց են տվել, որ համակցված թերապիա ստացողների մոտ վիրահատության շրջանում

հեմոդինամիկ անկայունությունն ավելի քիչ է հանդիպում: Սակայն այս հետազոտությունը ապացուցված չէ (56 [EL 3], 57 [EL 3]): Ալֆա-բլոկատորների հետ երբեմն նշանակվում է նաև բետա-բլոկատորներ: Բետա-բլոկատորներ նշանակվում են, միայն համապատասխան ալֆա-բլոկատորների թերապիայից հետո, եթե կա կայուն տախիկարդիա, էքստրասիստոլա, առիթմիա: Ամենատարածվածը պրոպրանոլոլն է, այն նշանակվում է 10-40 մգ յուրաքանչյուր 6-8 ժամ(53 [EL 4]):

Կալցիումի բլոկատորները նույնպես օգտագործվում են նախա- և ներվիրահատական շրջանում զարկերակային ճնշման հսկման համար: Նախավիրահատական շրջանում մյուս կարևոր բաղադրիչը հեղուկի և նատրիումի ներմուծումն է, քանի որ ֆեոքրոմագիտոման վազոկոնստրիկցիայի արդյունքում առաջացնում է ինտրավասկուլյար հեղուկի սպառում:

Ֆեոքրոմագիտոմայի ներվիրահատական շրջանի վարումը

Ֆեոքրոմագիտոմայի ներվիրահատական շրջանի վարումը պարտադիր է և կատեխոլամինների սինթեզը խթանող անզգայացնող դեղամիջոցներից պետք է խուսափել: Զարկերակային ճնշումը պետք է հսկել շարունակաբար, կենտրոնական զարկերակային կաթետերիզացիան անհրաժեշտ է ինտրավենոզ ծավալը որոշելու և հսկելու համար, երբեմն թոքային զարկերակի կաթետերիզացիա ևս անհրաժեշտ է սրտային պաթոլոգիայի դեպքում: Նախընտրելի են սրտի վրա առավել քիչ ազդեցություն ունեցող ինհալյացիոն անզգայացնող միջոցները: Հիպերտենզիան կարելի է հսկել նիտրոպրուսիդի, նիկարդիպինի, նիտրոգլիցերինի կամ ֆենտոլամինի միջոցով: Տախիառիթմիաները շտկվում են բետա-բլոկատորների միջոցով /էսմոլոլ/, փորոքային առիթմիաները՝ լիդոկայինի միջոցով: Ֆեոքրոմագիտոման հեռացնելուց հետո կարող է սուր հիպոտենզիա զարգանալ: Այն շտկելու համար անհրաժեշտ է մեծ քանակով հեղուկների ներմուծում և ալֆամեթիլներ: Անմիջապես վիրահատությունից հետո հնարավոր է հիպոտենզիայի և հիպոգլիկեմիայի զարգացում:

Հետվիրահատական շրջանի վարումը և հետագա հսկումը

Հետվիրահատական շրջանի վարումը կախված է ֆեոքրոմացիտոմայի բարորակ կամ չարորակ լինելուց, ինչպես նաև՝ հեռացվել է այն ամբողջությամբ, թե մասամբ: Քանի որ չկա հստակ չափորոշիչ չարորակ ֆեոքրոմացիտոմայի համար, այն դեպքերում, երբ ուռուցքը, հավանաբար, բարորակ է և կատարվել է ուռուցքի լիովին հեռացում, հետագա հսկումը կատարվում է ամեն տարի: Մի հետազոտության տվյալներով 176-ից 26, հավանաբար, բարորակ ֆեոքրոմացիտոմայի դեպքում (16%) երկարատև հսկման արդյունքում նկատվել է ռեցիդիվ, որը հայտնաբերվել է լաբորատոր հետազոտությամբ (58 [EL 3]): Ուռուցքի ոչ լրիվ հեռացման դեպքում կամ, եթե առաջնային ուռուցքը հեռացված է, բայց կա մետաստատիկ հիվանդություն, պետք է շարունակել ալֆա-բլոկատորների կիրառումը՝ ախտանշանային հսկման համար: Այլ հակահիպերտենզիվ միջոցները օգտագործվում են միայն, եթե ուռուցքը բարորակ է և կա էսենցիալ հիպերտենզիա: Եթե երկարատև օգտագործվել է բետա-բլոկատոր, այն միանգամից չպետք է դադարեցնել, հատկապես, սրտի իշեմիկ հիվանդություն ունեցող մեծահասակ պացիենտների մոտ:

Ալդոստերոնոմա

Ինցիդենտալոմաների 1%-ը կապված է ալդոստերոնի ինքնուրույն արտադրման հետ(59 [EL3]): Դեղորայքային ռեգիստենտությունը և ռեֆրակտեր հիպերտենզիան՝ 3 և ավել դեղորայքի կիրառման անարդյունավետությունը, ինչպես նաև ինքնակա հիպոկալիեմիան ($<3.5\text{mEq/L}$) կամ սուր դիուրետիկ-ինդուկցված հիպոկալիեմիան վկայում են առաջնային ալդոստերոնիզմի մասին: Մեծ մասամբ առաջնային ալդոստերոնիզմի ժամանակ հիպոկալիեմիան բացակայում է (60 [EL 3]): Մկանային ջղաձգումը և թուլությունը, գլխացավերը, ինտերմիտտիկ կամ պերիոդիկ պարալիզը, պոլիդիպսիան, պոլիուրիան, նիկտուրիան քիչ բնորոշ են, դրանք կապված են հիպոկալիեմիայի աստիճանի հետ (61 [EL 3], 62 [EL 3]): Բացի ալդոստերոնոմայից, առաջնային ալդոստերոնիզմի պատճառ կարող է լինել առաջնային (միակողմանի) մակերիկամի հիպերպլազիան և ալդոստերոն արտադրող ադրենոկորտիկալ քաղցկեղը (63 [EL 3], 64 [EL 3], 65 [EL4]): Առաջնային

միակողմանի մակերիկամի հիպերպլազիան հայտնաբերելը կարևոր է և վիրաբուժական միջամտությունը կարող է հիպերտենզիան վերացնել: Մակերիկամի հիպերպլազիայի և ադենոմայի տարբերակումը կարևոր է, այն իրականացվում է մակերիկամի երակային նմուշառման միջոցով՝ AVS:

Պաթոլոգիա

Ադենոմաները հիմնականում մեկուսացած են, հազվադեպ կարող են լինել երկկողմանի: Դրանք հիմնականում 2սմ-ից փոքր են, միջինում՝ 1.5-2սմ (69 [EL 4]):

Ախտորոշում և սքրինինգ

Առաջնային ալդոստերոնիզմի սքրինինգը ներառում է պլազմայի ալդոստերոնի խտության (ng/dL) հարաբերությունը ռենինի (ng/mL ժամում) խտությանը (65[EL4], 70-73[EL2], 74-76[EL4]): Հետազոտությունը ցույց է տվել ալդոստերոն-ռենին հարաբերության(ARR) արժեքը եթե բարձր է 30-ից, իսկ պլազմայում ալդոստերոնի խտությունը մեծ է 20ng/dL-ից, զգայունությունը կազմում է 90%, իսկ առանձնահատկությունը 91% (73 [EL 2]): Մայր կլինիկայի հետազոտողները կարծում են(4 [EL4], 10[EL4], 77[EL2]), որ եթե ARR> 20, իսկ պլազմայում ալդոստերոնի խտությունը >15ng/dL, ապա առաջնային ալդոստերոնիզմի ախտորոշումը հավանական է, այլոք հայտնաբերել են նաև ալդոստերոնի ցածր մակարդակով դեպքեր(78[EL4], 79[EL2], 80[EL2]): Սքրինինգից առաջ անհրաժեշտ է 4-6 շաբաթ բացառել սպիրտնուկատոնի և էպլերոնոնի օգտագործումը (միներալկորտիկոիդային ընկալիչների պաշարիչներ): Դիուրետիկները հաճախ են առաջացնում հիպոկալիեմիա, ռենին-անգիոտենզինային համակարգի ճնշում լինում է ԱՓՖ ինհիբիտոր և անգիոտենզին 2-րդ ռեցեպտորների պաշարիչների օգտագործման արդյունքում: ARR-ն ավելի զգայուն է, եթե արյունը վերցվել է առավոտյան, պացիենտի անկողնուց վեր կենալիս նվազագույնը 2 ժամ անց և 5-15 րոպե նստած վիճակում:

Առաջնային ալդոստերոնիզմի հաստատումը

Առաջնային ալդոստերոնիզմը կարող է հաստատվել, եթե ալդոստերոնի մակարդակը չի նվազում աղային բեռնվածության թեստի արդյունքում: Այն կարելի է իրականացնել մի քանի եղանակով:

1. Պացիենտին խորհուրդ է տրվում 3 օրվա ընթացքում օրական օգտագործել 1 թեյի գդալ աղ և աղով հարուստ սնունդ, օրինակ, չիպսեր, ձողիկներ:
2. Իզոտոնիկ լուծույթի սուպրեսիվ թեստ, 4 ժամ ներմուծվում է 300-500մլ/ժ իզոտոնիկ լուծույթ:

Այնուհետև ստուգվում է պլազմայի ալդոստերոնի խտությունը պացիենտի նստած դիրքում: Եթե պլազմայի ալդոստերոնի խտությունը մեծ է 10ng/dL-ից առաջնային ալդոստերոնիզմը հաստատվում է (81[EL 3]): 3-րդ օրվա ընթացքում, 24-ժամյա մեզում որոշվում է ալդոստերոնի, նատրիումի, կրեատինինի մակարդակը (ստուգել աղային բեռնվածության թեստի համապատասխանությունը): Որոշ կլինիկաներում ստուգվում է կալիումի մակարդակը աղային բեռնվածության թեստից առաջ: Մեզում կալիումի անհամապատասխան արտահոսքը ($>30\text{mmol/d}$) լրացնում է ախտորոշման հավաստիությունը: 24-ժամյա մեզում ալդոստերոնի մակարդակի ընկճման անբավարարությունը՝ 12 μg և պակաս, հաստատում է առաջնային ալդոստերոնիզմի ախտորոշումը: (10 [EL 4], 65 [EL 4], 71 [EL 2], 72 [EL 2], 75 [EL 4], 76 [EL 4]):

Ալդոստերոն արտադրող ադենոմա՝ ընդդեմ իդիոպաթիկ հիպերպլազիայի

Ալդոստերոն արտադրող ադենոմայի և մակերիկամի հիպերպլազիան տարբերակելը շատ կարևոր է: Վերջիններս առաջնային ալդոստերոնիզմի 95% դեպքերն են կազմում (1/3 ալդոստերոն արտադրող ուռուցք և 2/3 մակերիկամի առաջնային հիպերպլազիա): Տարբերակումը շատ կարևոր է, քանի որ ալդոստերոն արտադրող ուռուցքը բուժվում է վիրաբուժական եղանակով՝ միակողմանի ադրենալեկտոմիա(82 [EL 2]), իսկ հիպերպլազիան՝ միներալոկորտիկոիդային ընկալիչների անտագոնիստներով: Այս տարբերակումը պարզ չէ, քանի որ հաշվի է առնվում նաև ենթատեսակները՝ մեկուսացած, բիլատերալ ալդոստերոն արտադրող ադենոմա, միակողմանի հիպերպլազիա և հիպերպլազիա՝ համակցված մեկ կամ մի

քանի ոչ ակտիվ ինցիդենտալումաների հետ(65 [EL 4], 71 [EL2], 72[EL2], 75[EL4], 76[EL4]): Ալդոստերոն արտադրող ուռուցքները հանդիպում են երիտասարդների մոտ, հիպերտենզիան և հիպոկալիեմիան ավելի արտահայտված է, պլազմայի ալդոստերոնի խտությունը և մեզում ալդոստերոնի քանակն առավել բարձր է (65 [EL4], 71[EL2], 72[EL2], 75[EL4], 76[EL4]): Ալդոստերոն արտադրող ուռուցքներն ավելի լավ են պատասխանում սպիրոնոլակտոնով թերապիային, քան մակերիկամի առաջնային հիպերպլազիան: Սակայն նշվածներից ոչ մեկը առանձնահատուկ չէ ենթատեսակի որոշման համար:

Գործիքային հետազոտություն և տեղակայում

Ալդոստերոնի գերարտադրության աղբյուրի տեղակայումը պարզելը կարևոր է բուժման մարտավարությունը որոշելու համար: ՀՇ-ն իջեցնում է կեղծ-բացասական դեպքերը՝ բարձրացնելով կեղծ-դրական արդյունքները՝ հանգեցնելով ոչ անհրաժեշտ վիրաբուժական մոտեցման կամ առողջ գեղձի սխալ հեռացման: Այս խնդիրը մեծանում է տարիքին զուգահեռ, քանի որ ավելանում է նաև ինցիդենտալումաների հաճախականությունը: Մինչև 40 տարեկան առաջնային ալդեստերոնիզմով պացիենտերին, եթե ադենոմայի չափսը 1սմ մեծ է, միատեսակ է, հիպոդենս, գերկոնտրաստավորում չկա և մորֆոլոգիապես առողջ է մյուս մակերիկամը, ապա հետագա հետազոտման և տարբերակման կարիք չկա: Տվյալ դեպքում ցուցված է վիրահատական բուժում: Մեծահասակների մոտ, երկկողմանի մորֆոլոգիապես անկանոն գեղձի դեպքում կամ միակողմանի միկրոադենոմայի դեպքում կարիք կա հետագա տարբերակում կատարել ալդոստերոն արտադրող ադենոմայի և մակերիկամի առաջնային հիպերպլազիայի միջև: Այն իրականացվում է մակերիկամի երակային նմուշառման միջոցով: Վիրահատական բուժման հակացուցման դեպքում, նշանակվում է միներալկորտիկոիդային ընկալիչների պաշարիչներ (65 [EL4], 71[EL2], 72[EL2], 75[EL4], 76[EL4]): Մակերիկամի երակային նմուշառում նախատեսելիս, սպիրոնոլակտոնի և էպլերենոնի օգտագործումը դադարեցվում է համապատասխանաբար 6 և 4 շաբաթ: Աջ մակերիկամի երակի կանուլյացիան դժվար խնդիր է: Ըստ որոշ հետազոտությունների՝ 384 դեպքից 74%-ն է հաջողությամբ ստացվել (69[EL4]): Հիվանդացությունը, ոչ արտահայտված

արյունահոսությունը, արյունազեղումը, մակերիկամի ինֆարկտը հազվադեպ են հանդիպում: Կոտրոզինով խթանման թեստը բարձրացնում է ալդոստերոն/կորտիզոլ հարաբերությունն ալդոստերոն արտադրող ադենոմայի դեպքում: Ուղղված ալդոստերոն/կորտիզոլ հարաբերությունը (մի կողմի նմուշի ալդոստերոն/կորտիզոլ - մյուս կողմի մակերիկամի նմուշի ալդոստերոն/կորտիզոլ հարաբերությունը) եթե մեծ է 4: 1-ից, ապա միակողմանի ալդոստերոն արտադրող ադենոմա է, կարիք կա միակողմանի ադրենալեկտոմիայի: Ընտրողաբար մակերիկամի երակային նմուշառումը կակոթ է տարբերակելու համար ալդոստերոն արտադրող ադենոման և առաջնային միակողմանի հիպերպլազիան մակերիկամի առաջնային հիպերպլազիայից(68[EL3], 84[EL]):

Բուժում

Առաջնային ալդոստերոնիզմի վերջնական բուժումը կարևոր է: Պլազմայի ալդոստերոնի հավելյալ քանակը վտանգավոր է, նույնիսկ, եթե հիպերտենզիան և հիպոկալիեմիան համապատասխան վերահսկվում են: Եթե բուժում չի կատարվում, ապա ալդոստերոնի բարձր քանակը հնարավոր է առաջացնի միոկարդի ֆիբրոզ, ձախ փորոքի հիպերտրոֆիա, սրտային անբավարարություն, իշեմիկ գրոհների շատացում, մակարդման և անոթային խանգարման հանգի բարձր մահացություն (87-89[EL1], 90-95[EL2], 96-99[EL3]): Ընդհանուր հակացուցումների դեպքում՝ տարիք, այլ հիվանդություններ, իդիոպաթիկ երկկողմանի ալդոստերոնիզմ, վիրահատությունից հրաժարման դեպքում՝ բուժումը իրականացվում է սպիրոնոլակտոնի կամ էպերենոնի նշանակմամբ (65 [EL4], 71[EL2], 72[EL2], 75[EL4], 76[EL4]): Վերջինս համեմատած սպիրոնոլակտոնի՝ ունի քիչ անդրոգենային ընկալիչների անտագոնիստական ակտիվություն, հետևաբար, չի առաջացնում գինեկոմաստիա, իմպոտենցիա տղամարդկանց մոտ և մենստրուացիայի խանգարում կանանց մոտ (71[EL2], 100[EL3], 101[EL3], 102[EL2], 103[EL1], 104[EL1]): Ալդոստերոնի գերարտադրման միակողմանի աղբյուրի և առաջնային ալդոստերոնիզմի կասկածելի դեպքերում բուժման ընտրության մեթոդ է միակողմանի ադրենալեկտոմիան լապարասկոպիկ եղանակով: Պաթոլոգիկ այլ գոյացություններ ևս կարող են լինել մակերիկամում, դոմինանտ հանգույցը կարող է լինել հորմոն չարտադրող, հետևաբար, կարևոր է գեղձը զննել ամբողջությամբ:

Ֆիզիոլոգիական արդյունքները նույնական են լապարասկոպիկ և բաց ադրենալեկտոմիայի դեպքում (111[EL3]): Միակողմանի ալդոստերոնի գերարտադրության աղբյուրի դեպքում (AVS Adrenal venous sampling հայտնաբերված), կարելի է հիպոկալիեմիան լիովին շտկել: 90% և ավել դեպքերում կարելի է շտկել հիպերտենզիան հակահիպերտենզիկ դեղորայքով: 30-60% պացիենտներից հետագայում կարող են լիովին դադարեցնել հակահիպերտենզիկների ընդունումը հիմնականում երիտասարդ պացիենտները (65 [EL4], 71[EL2], 72[EL2], 75[EL4], 76[EL4]): Երկարատև ախտորոշումը կարող է առաջացնել երիկամի երկրորդային փոփոխության և արդյունքում՝ հիպերտենզիայի խորացում:

Կանանց մոտ կանխատեսումը համեմատաբար դրական է:

Սպիրոնոլակտոնով նորմալ շտկումը համարվում է ադրենալեկտոմիայի հաջող կանխատեսիչ մեթոդ (67[EL3], 112-114[EL3]):

Լապարասկոպիկ ադրենալեկտոմիան առավելություններ ունի՝ բաց եղանակի հետ համեմատած. վիրահատության կարճ տևողություն, լավացման կարճատև շրջան, հետվիրահատական ցավի կրճատում, արյան նվազագույն կորուստ, T12 նյարդի վնասման հավանականության կրճատում, հետվիրահատական ճողվածքների կրճատում (106[EL3]), 108[EL3], 115-117[EL3]): Եթե լապարասկոպիկ տրանսպերիտոնեալ ադրենալեկտոմիան հնարավոր չէ կատարել, ապա նախընտրելի եղանակներն են վերին որովայնային կամ հետին էնդոսկոպիկ կամ բաց եղանակով ադրենալեկտոմիան (118[EL3]): Ալդոստերոն արտադրող մեծ ուռուցքները՝ >6սմ, <Շ-ով >10HU, դիտվում են որպես ադրենոկորտիկալ քաղցկեղ և կատարվում է բաց եղանակով վիրահատություն:

Նախավիրահատական շրջան և հետվիրահատական խնամք

Նախավիրահատական շրջանում նշանակվում է մինեռալոկորտիկոիդային ընկալիչների անտագոնիստներ, անհրաժեշտության դեպքում այլ հակահիպերտենզիկ միջոցներ: Կալիումի լրացումը կատարվում է զգուշորեն: Հետվիրահատական շրջանում կալիումի քլորիդի ընդունումը շարունակվում է մինչ

նորմալ կալիեմիայի առաջացումը: Հետվիրահատական շրջանում դադարեցվում է միներալոկորտիկոիդային ընկալիչների անտագոնիստների ընդունումը, իսկ այլ հակահիպերտենզիվ միջոցներ նշանակվում են մինչև ճնշման կարգավորումը: Նորմալ վիճակը, առանց դեղորայքի ընդունման, կարող է տևել մի քանի շաբաթ կամ ամիս, կամ կարող է չլինել 65 [EL4], 71[EL2], 72[EL2], 75[EL4], 76[EL4]): Բետա-բլոկատորներ ստացողները չպետք է միանգամից դադարեցնեն դեղորայքի ընդունումը, իսկ իշեմիկ հիվանդություն ունեցողները պետք է դրանք երկարատև օգտագործեն:

Ադրենոկորտիկալ քաղցկեղ

Ադրենոկորտիկալ քաղցկեղը հազվադեպ է հանդիպում, իսկ կանխատեսումը վատն է: Մակերիկամի ինցիդենտալումայի սքրինինգի կարևորությունը ադրենոկորտիկալ քաղցկեղով պացիենտների հայտնաբերումն է (4[EL4], 6[EL4], 40[EL4]): Մինչ վիրահատությունը տարբերակիչ ախտորոշումը կատարվում է լաբորատոր և բջջաբանական տվյալների հիման վրա: Ռադիոլոգիական հետազոտմամբ հնարավոր է հայտնաբերել ադրենոկորտիկալ քաղցկեղին բնորոշ կասկածելի նշանները: Տվյալ պացիենտները ենթակա են վիրահատական բուժման: Ըստ որոշ հետազոտությունների՝ ադրենոկորտիկալ քաղցկեղը կազմում է ինցիդենտալումաների մինչև 5%-ը ([EL3]): Ադրենոկորտիկալ քաղցկեղի հանդիպման հավանականությունը կախված է ուռուցքի չափից, եթե ուռուցքի չափը <4սմ-ից հավանականությունը 2% է, 4.1-6սմ ուռուցքի դեպքում՝ 6%, >6սմ-ի դեպքում կազմում է 25% (6[EL4]):

2/3 դեպքերում ադրենոկորտիկալ քաղցկեղը հորմոնային ակտիվ է (121-123[EL3]) և կարող է առաջացնել հիպերկորտիզոլիզմ, վիրիլիզացիա, հազվադեպ՝ ալդոստերոնիզմ, ֆեմինիզացիա: Ընդհանուր առմամբ, ռադիոլոգիական եղանակով հայտնաբերված ինցիդենտալուման՝ ադրենոկորտիկալ քաղցկեղի կասկածելի դեպքերը կլինիկորեն արտահայտված չէ: Եթե ՀՇ-ով ինցիդենտալումայի խտությունը >10HU, կարելի է կասկածել ադրենոկորտիկալ քաղցկեղ: Վերջինիս հիմնականում բնորոշ է ՀՇ-ով խտությունը >30HU (14[EL3]): Տարբերակիչ ախտորոշում իրականացվում է ֆեոքրոմադիտոմայի, մետաստատիկ ախտահարման, լիպիդ քիչ

պարունակող աղենոմայի միջև: Կենսաքիմիական հետազոտությամբ որոշվում է հորմոնային ֆոնը:

Մետաստատիկ ախտահարման և ադրենոկորտիկալ քաղցկեղի տարբերակումը դժվար է: Սակայն վերջինս ունի բնորոշ ռադիոլոգիական նշաններ: Մետաստազի դեպքում ուշադրություն է դարձվում ուռուցքաբանական անամնեզին:

Բիոպսիան վերջնական տարբերակման համար կիրառելի չէ: FNA-ի միջոցով հնարավոր չէ տարբերակել ադրենոկորտիկալ քաղցկեղը և բարորակ աղենոման: Այն կատարվում է ֆեոքրոմացիտոման ժխտելուց հետո:

Եթե մետաստատիկ ախտահարում չկա, ապա ադրենոկորտիկալ քաղցկեղի բուժման համար կատարվում է բաց ադրենալեկտոմիա(124[EL3]):

Կլինիկա

Հորմոնային ոչ ակտիվ, թեև մեծ ադրենոկորտիկալ քաղցկեղին, որը հայտնաբերվել է պատահական ռադիոլոգիական հետազոտությամբ, բնորոշ են սակավ կլինիկական ախտանշանները: Որոշ դեպքերում կարող է լինել որովայնի կողմնային ցավեր, անհարմարավետություն, երբեմն տենդ՝ պայմանավորված ուռուցքի հեմոռագիայով:

Հորմոնային ակտիվ ուռուցքի դեպքում կլինիկան արտահայտված է: Բնորոշ է հիպերկորտիզոլիզմի կլինիկան, վիրիլիզացիան, հազվադեպ՝ ֆեմինիզացիա, հիպերալդոստերոնիզմ: Հորմոնային ոչ ակտիվ ուռուցքների մանիֆեստացիայի պատճառ կարող են լինել որովայնի վրա ճնշումը կամ ուռուցքի կոմպրեսիան:

Լաբորատոր հետազոտություն

Ադրենոկորտիկալ քաղցկեղի վիրահատությունից առաջ անհրաժեշտ է կատարել հորմոնային քննություն: Նույնիսկ կլինիկորեն չարտահայտված դեպքերում հորմոնները կարող են բարձր լինել:

Կորտիզոլ արտադրող ադրենոկորտիկալ քաղցկեղի դեպքում հետվիրահատական շրջանում բարձր է մակերիկամային անբավարարության զարգացման վտանգը:

Վիրահատությունից առաջ հորմոնային մարկերները հետվիրահատական շրջանում ծառայում են որպես ուռուցքամարկերներ: Պետք է ժխտել Կուշինգի համախտանիշը

և հիպերալդոստերոնիզմը, եթե կա հիպերտենզիա: Որոշվում է նաև անդրոստենդիոնի, տեստոստերոնի, դեհիդրոէպիանդրոստերոնսուլֆատի, 176-էստրադիոլի մակարդակը (վերջինս միայն հետմենոպաուզային շրջանում գտնվող կանանց և տղամարդկանց մոտ) (119[EL3]):

Ռադիոլոգիական հետազոտություն

